600.0083.24.03.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 մարտի 2021 թվականի №83Ա
ք. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի փետրվարի 3-ի №Ե/35/249-21, փետրվարի 17-ի №Ե/35/384-21 և փետրվարի 19-ի №Ե/35/418-21 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ու հարակից տարածքում գտնվող 15.9 քմ ոչ բնակելի տարածքը «ԱԳՐՈԱՏՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալությամբ հանձնելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգով, 2021 թվականի փետրվարի 19-ի №ԳԲ/34.1-Մ2-2/521-2021 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի մարտի 11-ի №02/12.8/7254-2021 գրությամբ Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումների համաձայն՝ Գործարքի մասով առարկություններ առկա չեն,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանը և պետական շահերին, իսկ անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և,

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ու հարակից տարածքում գտնվող 15.9 քմ ոչ բնակելի տարածքը «ԱԳՐՈԱՏՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալությամբ հանձնելու գործարքին:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝
   1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը.
   2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
COMMISSION FOR PRIVATE SERVICES REGULATORY OF THE RA
02531594

ք. Երևան
24 մարտի 2021թ.